

ՊԱՐԶ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՃԱԿԱՆ ՎԵՐԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ ԳՐԱՔԱՐՈՒՄ

Վերջին տասնամյակների խորհրդային ու ռուսական բանասիրական ուսումնասիրություններում զգալի տեղ է հատկացվում վերինաստավորմանը (ռուս. транспозиция, переосмысление)՝ լեզվաոճական այն երևույթին, երբ լեզվի կառուցվածքային այս կամ այն մակարդակի միավորները բառերը, ձևույթներն ու նախադասությունները, սկսում են կիրառվել իրենց համար անսովոր, հաճախ հակադիր քերականական նշանակությամբ՝ արդյունքում ձեռք բերելով ոճական զգալի արտահայտչականություն: Նման դեպքերում միմյանց են հակադրվում լեզվական միավորների իմաստային և ձևական պլանները, որի հետևանքով լեզվական բազմաթիվ երևույթներ նորովի են դրսևորվում: Քանի որ հնչյունները գուրկ են իմաստային պլանից և սուսկ արտահայտման գործառույթ են իրականացնում, այդ պատճառով նրանցում այս երևույթը բացակայում է: Վերինաստավորման ժամանակ առաջին հերթին գործ ենք ունենում միմյանց հետ իմաստային կամ շարույթային որոշակի հարացույց կազմող լեզվական ձևերի հետ, որոնք ոճական որոշակի համատեքստում կարող են գործածվել մեկը մյուսի փոխարեն: Այսպիսով՝ վերինաստավորումը որպես լեզվաոճական ուրույն երևույթ, կարելի է բնորոշել որպես «...լեզվական որևէ միավորի կիրառությունը հարացուցային շարքում նրա հակադիր անդամի գործառույթով»¹:

Լեզվաբանության մեջ ձևավորվել է ավանդույթ, որի համաձայն՝ վերինաստավորումն ավելի շատ հարաբերվում է քերականական իրողություններին. բառային վերինաստավորման դեպքում հիմնականում օգտագործվում է «փոխաբերություն» հասկացությունը: Սակայն այս լեզվական երևույթների էական նմանություններն այնքան ակնհայտ են, որ փորձեր են արվում «փոխաբերություն» գիտական տերմինի բառիմաստի ընդլայնման միջոցով կազմավորել ու գիտական լայն շրջանառության մեջ դնել լեզվաբանական նոր հասկացություն՝ «քերականական փոխաբերություն», որը համանիշ է համարվում «վերինաստավորում» տերմինին: Մասնավորապես, Ի. Առնոլդը հավասարապես կիրառելի է համարում այս երկու հասկացությունները, որոնք, նրա կարծիքով, նշանակում են միևնույն լեզվական իրողությունը, այն է՝ լեզվական միավորների՝ իրենց համար անսովոր քերականական նշանակությամբ գործածությունը, «...որն ստեղծում է լրացուցիչ հուզական, արտահայտչական, ոճական նրբիմաստներ»²:

Քերականական վերինաստավորման հիմքում ընկած է քերականական կարգ կազմող ձևույթային-շարահյուսական հակադրությունների հարացույցում լեզվական միավորի՝ հակադիր հարացուցային քերականական իմաստով հանդես գալու ուշագրավ ունակությունը: Ինչպես հայտնի է, «Քերականական կարգը ուրիշ կարգի շահագեցվող, բովանդակության պլանում մեկ կամ ավելի հատկանիշներով

¹ В. Гак. Транспозиция, Лингвистический энциклопедический словарь, М., 1990, с. 519.

² И. В. Арнольд. Стихистика современного английского языка. - Лен., 1981, с. 57:

հակադրվող և ձևաբանական կամ շարահյուսական միջոցներով արտահայտվող երկու կամ ավելի քերականության մեծություներն է՝, որտեղ քերականական իմաստն ու նրա ձևական կադապրավորումը հանդես են գալիս անբակտեղի միասնականության մեջ: Մասնավորապես, ձևաբանական մակարդակում բայի ժամանակային քերականական կարգն են կազմում ներկայի, անցյալի ու ապագայի իմաստ արտահայտող համապատասխան բայական ժամանակաձևերը: Ու թեև գրաբարում, ինչպես և յուրաքանչյուր քիչ թե շատ մշակված լեզվական համակարգում, բայական ամեն մի ժամանակաձև ունի իր հարաբերակցություն կայուն քերականական իմաստն ու կիրառական նշանակությունը, սակայն, ինչպես իրավացիորեն նկատել է Լ. Հովհաննիսյանը, «...երբեմն այս կամ այն քերականական ժամանակը կարող է հանդես գալ այլ ժամանակի իմաստով: Վերջին այս կիրառությունը չեզոքաբանական գրականության մեջ անվանվում է ժամանակների երկրորդական, փոխաբերական կիրառություն» (ընդգծումը մերն է.— Ք.Շ.): Դասական գրաբարում, հատկապես աստվածաշնչյան թարգմանական հատվածներում, այդպիսի վերինաստավորումները բազմաթիվ են: Բերենք մեկ օրինակ. «Ջանացաւ աղքատն ի նուազել կենաց իւրոց, եւ ի հանգստեան իւրում կարաստեալ գտաւ» / Սիրաք, ԼԱ, 4/: Ոճական համատեքստը մեզ հուշում է, որ այս հատվածում խոսքը ոչ թե անցյալում կատարված և սահմանական եղանակով բնորոշվող գործողության / ինչպես թվում է անցյալ կատարյալով հանդես եկող համապատասխան բայաձևերի կիրառությունից/, այլ ստորադասական եղանակի և ապագային վերաբերող պատճառահետևանքային որոշակի կապի մասին է: Բերված հատվածի իմաստային և բովանդակային պլանները չեն համընկնում. այդ նախադասության բովանդակությանը քերականորեն համապատասխանում է հետևյալ նախադասությունը. «Յորժամ ջանայցէ աղքատն ի նուազել կենաց իւրոց, ի հանգստեան իւրում կարաստեալ գտցէ»: Սակայն առաջին նախադասությունը կիրառվել է փոխաբերաբար՝ երկրորդ նախադասության բովանդակային իմաստով՝ արդյունքում լրացուցիչ ոճական արտահայտչականություն հաղորդելով հեղինակի խոսքին. այդ պատճառով էլ այս շարահյուսական կառույցները, թեև տարբեր քերականական կարգեր են իրենցից ներկայացնում, տվյալ ոճական համատեքստում համանիշներ են հանդիսանում: Չնույթնորի մասնատիպ փոխաբերական կիրառությունների վրա հիմնված ոճական վերինաստավորումները հատուկ են խոսքի տարբեր մասերի գանազան քերականական կարգերին՝.

Քերականական փոխաբերությունների շարքում ամենից ավելի հանգամանալից մասնագիտական ուշադրության են արժանացել շարահյուսական վերինաստավորումները, մասնավորապես՝ միյանցից ըստ երանգի կամ նպատակի տարբերվող նախադասությունները, որոնք չնայած ունեն իրենց յուրահատուկ քերականական իմաստները, սակայն երբեմն ունակ են հանդես գալու նաև նույն հարացույցում իրենց հակադրությունը կազմող նախադասությունների փոխարեն: Նման շարահյուսական կառույցների շարքում

¹ Գ.Բ. Дзялука, *Общее и армянское языкознание*, Ереван, 1978, с. 113

² Լ.Շ. Հովհաննիսյան, Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը, Լեզվի և ոճի հարցեր, հ. 3, Երևան, 1973, էջ 256

³ Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս Գ.Մ. Морозовский, О.П. Воробьева, Н.И. Лиммерст, 3В. Тимощенко, *Стилистика английского языка*, Киев, 1991:

քիչ բն շատ լուրջ գիտական վերլուծության է ենթարկվել հետտորական հարցը՝ արտահայտության պլանում հարցական, սակայն բովանդակային առումով պատմողական նախադասությունը։ Բացի այդ, շարահյուսական ուրույն հարացույց են կազմում նաև հաստատական և ժխտական նախադասությունները, որոնք բեն նույնպես ունեն հաստատում կամ ժխտում արտահայտելու՝ իրենց բնորոշ քերականական իմաստները, սակայն առանձին ռճական կիրառությունների դեպքում կարող են վերինաստավորվել՝ հանդես գալով մեկը մյուսի քերականական իմաստի արտահայտման գործառույթով։ Վաղուց արդեն զարդանիք չէ, որ ձևով հաստատական նախադասությունը կարող է օգտագործվել բովանդակային պլանում ժխտում արտահայտելու նպատակով, և ընդհակառակը՝ կան ձևով ժխտական շարահյուսական կաղապարներ, մասնավորապես՝ նվազատյոթը /ռուս. *мало*/, որոնց բովանդակությունը հանգում է հաստատական նախադասության¹։

Լեզվի քերականական համակարգում շարահյուսական հարացույց են կազմում նաև միակազմ, երկկազմ և թերի նախադասությունները։ Նրանք արտահայտության պլանում միմյանցից առանձնանում են նախադասության գլխավոր անդամների դրսևորման առանձնահատկություններով։ Այսպես՝ երկկազմ նախադասությունը բնորոշվում է այն հանգամանքով, որ այստեղ «...նախադասությունը կազմված է լինում երկու բևեռից կամ մասից, որոնցից մեկն արտահայտում է ստորոգվող հատկանիշն ու ստորոգումը, իսկ մյուսն արտահայտում է այն առարկան /կամ որպես այդպիսին մտածված երևույթը/, որին վերագրվում է հատկանիշը»²։ Սրան հակադրվում է միակազմ նախադասությունը, որը զուրկ է մնան երկբևեռայնությունից և կազմված է սուկ մեկ մասից, մեկ բևեռից։

Պարզ նախադասության կազմության սույն քերականական հարացույցի մաս են կազմում նաև թերի /այդ թվում՝ զեղչված/ նախադասությունները, որոնք հակադրվում են ինչպես միակազմ, այնպես էլ երկկազմ նախադասություններին։ Ի տարբերություն վերջին տիպի նախադասությունների՝ թերի նախադասություններում նախադասության մեկ կամ մի քանի անդամներ չեն գործածվում, թեև այդ հանգամանքը չի խանգարում նախադասության իմաստի ըմբռնմանը³։

Ինչպես մյուս տիպի քերականական հարացույցներում, այս դեպքում նույնպես հաճախակի են լեզվական այս կամ այն միավորի վերինաստավորման դեպքերը, երբ արտահայտման պլանում նախադասությունների տիպային հարացույցի մի տեսակին պատկանող շարահյուսական կառույցն օգտագործվում է նրան հակադրվող հարացուցային ձևի քերականական իմաստն արտահայտելու նպատակով։ Համառոտ անդրադառնանք այս տիպի շարահյուսական փոխաբերությունների հիմնական գրաբարյան դրսևորումներին։

Դասական գրաբարում լայն տարածում են գտել շարահյուսական այն կառույցները, ուր ենթակայի հետ մեկտեղ հանդես է գալիս դիմավոր բայի գործառույթ իրականացնող, բայց ձևականորեն մնան ունակություններից զուրկ

¹ Այդ մասին ավելի մանրամասն տես Մ.Է. Կուլեզ, Ю.М. Скребица, *Синтаксис английского языка*, Леп., 1960։

² Արքահայկան Ս.Գ. Պատմալայն Ն.Ա., Օհանյան Հ.Ա., Բաղդկյան Խ.Գ. *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 3, Երևան, 1976, էջ 134։

³ Նույն տեղում, էջ 135։

անկախ դերբայական միավորը՝ առանց օժանդակ բայի: Կախված դերբայի արտահայտման եղանակից՝ նման կառույցները գրաբարում երկուսն են՝ «ենթակա + անցյալ դերբայ» և «ենթակա + անորոշ դերբայ»: Այսպես՝ առաջին տիպի կառույցի գրաբարյան կիրառության նմուշներից են. «Արդ՝ ինչալ դահնապետն պարծելով՝ շարամահ անել զնա, և ետ հանել զնոսա շղթայիս ի քաղաքէն» /Ագաթ., 111/: «Յայսմ հետև և յառաջ ի մտի այսպէս եղեալ իմուն անձինս, զի եթէ և զոյ հնար առնել զմի անձն իմ բազում անձինս, զիտ և գլխօժարութիւն կամաց առաւել ևս քան զնոյնս» /Փարպ., 49/: «Ոչ յ կարծ ընդոստուցեալ, և ոչ ի լուր գարթուցեալ այլ ես ինքնին անձամբ անդէն ի տեղուցն պատահեցի և տեսի և լույս զձայն բարբառոյ յանդգնաբար խօսելով» /Նոյ., 15/: Այս օրինակներում առանց օժանդակ բայի գործածված անորոշ դերբայը ձեռք է բերել ինքնուրույնաբար, իր անդեն ձևային կաղապարով նախադասության ստորոգյալի գործառնություն կատարելու ունակություն: Անշուշտ, քերականորեն դերբայը զուրկ է նման հնարափոխությունից. նախադասության ստորոգյալ կարող է դառնալ միայն խոնարհված դիմավոր բայը, սակայն մեքքերված օրինակներում անցյալ դերբայը գրաբարում կիրառվել է փոխարեբարբար, համապատասխան դիմավոր բայաձևի փոխարեն՝ բովանդակության պլանում արտահայտելով վերջինիս ժամանակային, դիմային և թվային հատկությունները: Այսպես՝ առաջին օրինակում «ելեալ» անորոշ դերբայն օգտագործվել է «ելլ» անցյալ կատարյալի երրորդ դեմքի եզակի թվի, իսկ երկրորդ օրինակում «եղեալ»-ը՝ նույն ժամանակի եզակի առաջին դեմքի դեմքի ժամանակաձևերի փոխարեն: Այստեղ որոշակի խոնարհվողի տեղիք է տալիս այն հանգամանքը, որ գրաբարում անցյալ դերբայի և համապատասխան օժանդակ բայաձևերի միջոցով կազմվում են բաղադրյալ ժամանակաձևեր, և երբեմն թվում է, թէ առանց օժանդակ բայի գործածված անցյալ դերբայի մոտ այդ օժանդակ բայը պարզապես զեղչվել է: Այսպես՝ Պ. Շարաբխանյանը միտք է հայտնել, որ «երբեմն անցյալ դերբայի հետ ապաստի օժանդակ բայը, հատկապես *լինիմ* բայը անցյալով չի դրվում, և անցյալ դերբայն ստանում է դիմավոր բայի նշանակություն. աշխարհաբար թարգմանվում է դիմավոր բայով»: Այս առթիվ պետք է նկատել, որ շատ դեպքերում ինքնուրույնաբար գործածված և ստորոգյալի գործառնությամբ իրականացնող անցյալ դերբայի հետ ամենևին չի ակնկալվում օժանդակ բայի գործածություն, հատկապես այն դեպքերում, երբ այն օգտագործվում է անցյալ կատարյալի ժամանակաձևին բնորոշ գործողության քերականակա իմաստ արտահայտելու համար: Բացի այդ, նախադասության ստորոգյալի դեր կարող է ստանձնել նաև անորոշ դերբայը, իսկ վերջինս իր ուղիղ ձևով չի մասնակցում գրաբարում բաղադրյալ ստորոգյալի կազմավորման գործընթացին, հետևաբար այստեղ խոսք լինել չի կարող համապատասխան օժանդակ բայաձևի զեղչման մասին: Բերենք անորոշ դերբայի՝ դիմավոր բայաձևի իմաստով գործածության օրինակներ. «Ապա առնոյր Վասակ զգունդն Հայոց, և զՀոնսն հանդերձ Ալանօքն *կոչել յօգնականութիւնս*» /Բուզ., 125/: «Սիրտ իմ առաջնորդեաց իմաստութեամբ, եւ զօրանալ յուրախութեան, մինչեւ տեսից ո՞ր իցէ բարին որդւոց մարդկան» /Ժողովող, Բ, 3/: «զԱստուած արարիչ ասել այնպիսի իրաց անպատշաճ է. և ոչ ի նմանէ ունել զգոյութիւն շարեաց» /Եզն., 194/: Ավելին՝ գրաբարում նույնիսկ

¹ Շարաբխանյան Պ. Ե. Գրաբարի դասընթաց, երևան, 1974, էջ 241:

հանդիպում են դեպքեր, երբ մինևույն բարդ նախադասության մեջ կողք կողքի դիմավոր բայի նշանակությամբ գործածվում են ինչպես անցյալ, այնպես էլ անորոշ դերբայներ. «Ձմի ոմն ի հաւատարիմ ծառայից իւրոց ի գործ առաքելո յերկիրն Հայոց՝ դրում անուն էր Դեմշապուհ. որ եկեալ հասեալ իրամանաւ արքունի, գողջոյն քերեալ գնեծ թագաւորին. եւ խաղաղասէր կեղծաւորութեամբ աշխարհագիր առնել ամենայն երկրին Հայոց ի թողութիւն հարկաց եւ ի թեթևութիւն ծանրութեան այրուծիոյն» /եղ., 22/:

Ընդգծված անդեմ ստորոգյալներով նախադասություններն արտահայտության պլանում միակզան են, որովհետև ձևականորեն այստեղ ստորոգման քերականական ակտ չի իրագործվում, այլ անորոշ և անցյալ դերբայների միջոցով ենթակային վերագրվում է ընդհանրապես գործողության հատկանիշ՝ առանց թվի, դեմքի, սեռի, կերպի, ժամանակի որոշակիացման: Բոլորովին այլ է իրավիճակը, սակայն, մեջբերված օրինակների բովանդակային հարթությունում. զրաբարում «անցյալ դերբայ + ենթակա» և «անորոշ դերբայ + ենթակա» շարահյուսական կառույցները չիմաստ երկկզան նախադասությունների ոճական իմաստ են ստանում. որովհետև ստորոգյալի գործառույթով կիրառված դերբայական ձևերը վերիմաստավորվում են՝ ստանալով ոճական նույն համատեքստում գործառնող մյուս դիմավոր ստորոգյալների քերականական հատկանիշները: Այսպես՝ անցյալ դերբայի փոխաբերաբար կիրառության առաջին օրինակում «եկեալ» անդեմ բայի հետ նույն ոճական համատեքստում գործածված «ետ» դիմավոր բայի շնորհիվ դերբայով արտահայտված ստորոգյալը ձեռք է բերում պակասող համապատասխան բայական հատկանիշները՝ դեմքը, թիվը, ժամանակը և ընթերցողի կողմից ընթերցվում է որպես «եկ» խոնարհված բային համանիշ: Նույն կերպ անորոշ դերբայական ձևերի օրինակներից առաջինում «առնույր» դիմավոր բայի ակայությունը նպաստում է, որ ստորոգյալի դերում հանդես եկող անորոշ «կոչել» դերբայը վերիմաստավորվի որպես «կոչչր»՝ նախորդ խոնարհված բայից ստանալով դերբայական ձևին պակասող ժամանակային, դիմաթվային և մյուս հատկանիշները: Այս օրինակները վկայում են, որ թեև զրաբարի շարահյուսության մեջ «ենթակա + դիմավոր ստորոգյալի գործառույթ իրականացնող դերբայ» լեզվական կաղապարն արտահայտման պլանում միակզան է /ձևականորեն ստորոգման գործողություն չի իրականանում/, սակայն բովանդակային պլանում վերիմաստավորվում է՝ ընթերցվելով որպես լիարժեք երկկզան նախադասություն:

Արտահայտության պլանում միակզան են ներկայանում նաև զրաբարի զեղչված զլխավոր անդամ ունեցող թերի նախադասությունները՝ սակայն բովանդակության պլանում նրանք նույնպես երկկզան են. ինչպես ընդգծում է Ս. Աբրահամյանը, զեղչված և ընդհանրապես թերի նախադասությունները որպես այդպիսին, այսինքն՝ ձևականորեն որպես ոչ երկկզան կառուցվածք ունեցող կաղապարներ, կարելի է դիտել միայն ձևային, կառուցվածքային տեսակետից, քանի որ բովանդակության առումով այս տիպի նախադասությունների միտքը թերի չէ և բավարար չափով հանկազմվում է¹⁰: Գրաբարում ընդհանրապես ենթակայի զեղչման դեպքերը սովորական ոճական երևույթ են և համդիպում են բավական հաճախ: Այսպես. «եւ եկին հասին նոցա մեծապարծ երեսելի

¹⁰ Տե՛ս Աբրահամյան Ա. Գ., Պատմայան Ն. Ա., Օսանյան Հ. Ա., Բաղիկյան Թ. Գ., նշվ աշխ., էջ 446

հոգեւորագգեաց փառօք ի Հայաստան երկիրն. եւ արքայն Արշակ ընդ առաջ էրթայր նոցա մինչեւ ի լեառն, որ անուանեալ կոչի Առեծ: Եւ անդ պառաւեհալ միմեանց մեծաւ լրջմտութեամբ, լցեալք օրհնութեամբ ռոջունիւն, անդուստ յաշխարհն դարձան» /Բուգ., 62/: «Հայոց թագաւորէ Արտաւազդ որդի Տիգրանայ: Բայց այլ ոչ ինչ գործ արութեան եւ քաջութեան եղոյց. այլ սուղեաց եւ ըմպելիաց պարապեալ, մօրից եւ ձեռնապարակաց թափառեալ շրջիլ եւ ամապարաց, զհշակայրիս եւ զխօզս արածելով. զիմաստօքնն էւ զքաջութենն եւ զքարթի յիշառակաց անփոյթ արարեալ, ծառայ եւ ստրուկ որովայնի արդարեւ լինելով՝ զաղբիւս մեծացուցանէր» /Նոր., 137/: Այս լեզվաոճական արտահայտամիջոցը, սակայն, առանձին ղեպքերում հայ պատմիչների մտ հասցվում է ծայրահեղության, այնպես, որ երբեմն ձեւակնորեն դժվար է հասկացվում, թե ում է վերագրվում գործողությունը: Դիտարկենք Բուզանդից բերված հետևյալ օրինակը. «Իսկ դարձեալ ասնոյր զձեռանն, դարձեալ տանէր յայն հող Պարսից. ապա աշխարհը զասացեալսն. խոնարհիւր բոլոս հարկանէր զտոսից նորա, մեծապէս ապաշխարելով զգոյմամբ զասացեալ բանն: Իսկ յորժամ առեալ զձեռանն զնա տանել ի հայ հողն, եւս խստագոյն քան զառաջինսն բարբառէր. իսկ դարձեալ միսանգամ հանէր յայնմ հողոյն, բանիւք յապաշխարութիւն դառնայր: Յայգուէ մինչեւ երեկոյն այնպէս շատ փորձ փորձեաց զնա. զի իբրեւ ի վերայ հարեալ հողոյն տանէր, խոստացեալ ամբարտաւանէր. իսկ ի վերայ քուն զեանոյն յատակին՝ եւ կայր, ի գոջումն դառնայր /Բուգ., 142/: Չուտ արտահայտության պլանում անհնար է յայտեղ մատնանշել, թե ով ում հանդեպ է կիրառում նկարագրվող փորձությունները՝ Շապուի արքան հայոց Արշակ թագավորի նկատմամբ, թե՛ ընդհակառակը: Մակայն բովանդակային հարթությունում, անշուշտ, նման անորոշությունը չբանում է նախադասության ոճական համատեքստը ընթերցողին հնարավորություն է տալիս միանշանակորեն մեկնաբանել նկարագրվող իրադարձությունները:

Համեմատաբար ավելի սակավ են զրաբարի ստորոգյալի գեղչման արդյունքում առաջացած թերի նախադասությունները, որոնք մույնպես յովանդակային առումով երկկամ են ներկայանում: Առանձնապես հետաքրքիր են այն դեպքերը, երբ բարդ նախադասության կազմում գտնվող համադաս պարզ նախադասություններից առաջինում գեղչված ստորոգելիական բեռը հանդես է գալիս սուկ երկրորդում. «Բարկութիւն ի՞նչ որդի անմիտ, եւ ցաւք են ծնանելոյ նորա» /Առակ., ԺԷ, 25/: Երբեմն բայական մասը, արտահայտվելով նախադասություններից մեկում, նրան հաջորդող մի ամբողջ շարք նախադասություններում այլևս չի դրսևորվում. «Եղբորդդին իմ սպիտակ է ե կարմիր՝ ընտրեալ ի բիրոց: Գլուխ նորա յուկոյ կեփազեայ, վարսք նորա կռածոյք սեաւ իբրեւ զագօտ: Այք նորա իբրեւ զաղանիս ի վերայ լիութեանց ջրոց. լռացեալ կաթսանք, նստեալ ի վերայ ջրոց լրութեան» /Եղգ երգոց, Ե, 10-13/: Սակայն, անշուշտ. ամենից հաճախ թերի նախադասությունները կիրառվում են երկխոսություններում՝ գրույցն ավելի դինամիկ ու գրավիչ դարձնելու նպատակով. «Եւ ասէ Լարան ցՅակոր, /.../ ընդ՝ Ի գողացար զաստուածսն իմ: /.../ Պատասխանի ետ Յակոր եւ ասէ ցԼարան, Քանզի երկեալ. ասացի թէ գուցէ անհիցես զդատերս քո յինէն, եւ զամենայն քո ինչ զիմ» /Մենդ., ԼԱ, 31/: Բերված բոլոր օրինակներում, չնայած ձեւակն

միարևնոյանությանը, ընդգծված նախադասությունների զեղչված անդամները հեշտությամբ վերականգնվում են բովանդակային պլանում:

Սկզբունքորեն այլ է իրավիճակը գրաբարի անվանական միակզմ նախադասությունների ոճական վերինաստավորման պարագայում. այս դեպքում և արտահայտության, և բովանդակության պլաններում գործ ենք ունենում կազմությանը միակզմ նախադասությունների հետ: Գիտարկենք հետևյալ անվանական միակզմ շարահյուսական կառույցները. «Փառք եւ պատիւ առաջի երեսաց սորա» /Մնաց., Ա, ԺԶ, 27/: «Վա՛յ այնոցիկ, ընդ ոյր ձեռն գայեզ գայթակղութիւն» /Նոր., 354/: Այս նախադասությունների արտահայտության պլանը միակզմ է, որովհետեւ, ինչպես նշում է Ս.Աբրահամյանը, նման տիպի կառույցներում նախադասության «... զյխավոր անդամն արտահայտվում է առարկա ցույց տվող գոյականով»¹¹: Իրենց բովանդակության պլանում արդեն անվանական միակզմ նախադասություններն արտահայտում են «... առարկայի եղելությունը, գոյությունը տվյալ վայրում, պայմաններում»¹²: Բանն այն է, որ վերինաստավորման արդյունքում գրաբարյան անվանական միակզմ նախադասությունների բովանդակության պլանում հայտնվում են «են», «լինին», «նդանին» բայերի համապատասխան ժամանակի միադիմի ձևերը /է, էր, իցէ, լիցի, եղեւ և այլն/, որոնք արտահայտության պլանում հանդես եկած գոյականների հետ կազմում են բաղադրյալ ստորոգյալ¹³: Զիչ առաջ բերված անվանական նախադասություններն իրենց բովանդակության պլանում կունենան հետևյալ տեսքը՝ «Փառք և զովութիւն է առաջի երեսաց նորա», «Վա՛յ լիցի այնոցիկ, ընդ ոյր ձեռն գայեզ գայթակղութիւն»: Սակայն նույնիսկ այսպիսի բովանդակային պլանում անվանական միակզմ նախադասությունը երկկզմ է չի դառնում, որովհետեւ էական բայերի միադիմի բայածևը «...զուրկ է ստորոգող հատկանիչից»¹⁴ և նախադասության մեջ հանդես է գալիս միայն անվանական բաղադրյալ ստորոգյալի կազմում: Փաստորեն վերինաստավորված անվանական նախադասությունը նորից միակզմ է, քանզի այստեղ առկա է միայն ստորոգյալի քեծոր /մեր օրինակներում՝ «Փառք եւ զովութիւն է» և «Վա՛յ լիցի» անվանական ստորոգյալները/, իսկ ենթական բովանդակության պլանում չի դրսևորվում:

Գրաբարի որոշ ընդհանրական-միակզմ նախադասությունների արտահայտության պլանում կարող է լինել «դու, դուք, մարդ» ձևական ենթական. նման կառույցները ձևականորեն երկկզմ են: Այսպես, «Մարդ ստրկանայ՝ յորժամ օտարանայե յիրմ տեղոյ» /Առակ, ԻԷ, 8/: Դիշտ է, բովանդակության պլանում նրանք շարունակում են պահպանել իրենց երկկզմ բնույթը, սակայն նրանց ենթական ենթարկվում է ձևաբանական վերինաստավորման, քանզի նրա դիմային արտահայտությունը այդպիսի շարահյուսական կառույցներում փոխաբերական բնույթ ունի և բովանդակության պլանում վերաբերում է ոչ թե եզակի ու հոգնակի երրորդ դեմքին կամ կոնկրետ մարդկանց, այլ ունի ընդհանրական նշանակություն. ինչ վերաբերում է անորոշ-դիմավոր և ձևական-դիմավոր /կամ միադիմի

¹¹ Նույն տեղում, էջ 496:

¹² Նույն տեղում:

¹³ Գրաբարի անվանական ու ընդհանրապես միակզմ նախադասությունների, նրանց արտահայտության ու բովանդակության սղանների զրուսերման առանձնահատկությունների մասին ավելի մանրամասն տես Գ. Կ. Նալբախյան, Գրաբարի միակզմ նախադասությունները, Երևան, 2002:

¹⁴ Նույն տեղում, էջ 90:

բայաձևով արտահայտվող՝ միակզմ նախադասություններին, ապա նրանք և՛ արտահայտության, և՛ բովանդակության պլաններում, որպես կանոն, միակզմ են¹¹։

Անորոշ դերբայով կազմված բայական միակզմ նախադասությունները գրաբարում արտահայտման պլանում ենթակա չունեն, իսկ ստորոգյալի բևեռը դրսևորվում է մասնակիորեն՝ անորոշ դերբայի միջոցով, որը ձևաբանորեն զուրկ է ստորոգում իրականացնելու հնարավորությունից. այսպես՝ «Ճանաչել զինաստություն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» /Առակ, Ա, 1/; «Մի՛ տալ զժողովուրդսն ի ձեռս անաստուած հեթանոսաց» /Բուզ., 163/։ Այս տիպի նախադասությունները, ուղեկցվելով համապատասխան հնչերանգով, բովանդակության պլանում հիմնականում արտահայտում են հրաման, հորդոր, պահանջ, առաջարկություն և «...իրենց բնույթով մտնում են հրամայական նախադասությունների շարքը, բայց, իհարկե, չունեն այն լայն, բազմապիսի կիրառությունները, ինչ որ դիմավոր բայով արտահայտված հրամայական նախադասությունները»¹²։ Սա նշանակում է, որ բայական անդեն միակզմ նախադասությունները բովանդակության պլանում ընթրնվում են հիմնականում որպես երկկզմ նախադասություններ՝ ուղղված մեկ կամ մի քանի անձանց և ըստ այդմ ունենալով եզակի կամ հոգնակի թվով դրված ենթակա։ Մեր օրինակներում նախադասությունների բովանդակային պլանները այսպիսի տեսք ունեն. «Ծանոցէ՛ք /ծանիրք/ զինաստութիւն եւ զխրատ, իմացարտք /իմացիր/ զբանս հանճարոյ», «Մի՛ տար /մի՛ տարք/ զժողովուրդսն ի ձեռս անաստուած հեթանոսաց»։ Միայն առանձին դեպքերում որոշ ժխտական կառուցվածք ունեցող բայական անդեն նախադասությունների բովանդակային իմաստը նույնպես կարող է միակզմ լինել։ Մասնավորապես, ինչպես նշում է Գ. Խաչատրյանը. «Չխոսել նշանակում է չի կարելի խոսել»¹³։

Այսպիսով՝ գրաբարի պարզ նախադասությունների արտահայտության և բովանդակային պլանները ոչ միշտ են համընկնում միմյանց. առանձին դեպքերում քերականորեն միակզմ կառուցվածք ունեցող նախադասությունները բովանդակության պլանում վերինասավորվում են՝ արտահայտելով երկկզմ նախադասությանը բնորոշ բովանդակային ոճական նրբինաստ։ Այս լեզվաճանկան երևույթի՝ պարզ նախադասության ոճական վերինաստավորման արդյունքում գործածված լեզվական միավորները ձեռք են բերում հավելյալ զգալի ոճական արտահայտչականություն։

¹¹ Տես նույն տեղում, էջ 25–167։

¹² Արթուրյան Ա. Գ., Պատմալայան Ն. Ա., Օհանյան Հ. Ա., Բարդիկյան Խ. Գ., Նշվ աշխ., էջ 492։

¹³ Խաչատրյան Գ. Կ., Նշվ աշխ., էջ 171։

Т.С. Шахвердян

Транспозиция строения простого предложения в древнеармянском языке

В статье рассматриваются проблемы транспозиции состава простого предложения в древнеармянском языке – классическом грабаре. Как известно, во время транспозиции происходит переосмысление смысла элементов разных уровней языка вследствие их употребления в несвойственном им грамматическом значении. В числе таких транспозиций особое распространение получил риторический вопрос – вопросительная по форме, но повествовательная по содержанию синтаксическая структура. В исследовании на примере транспозиций состава простого предложения показывается, что классическому грабару также свойственно переосмысление грамматических структур. Формально односоставное предложение часто в древнеармянском языке в содержательном аспекте является двусоставным – например, вследствие необычного стилистического употребления сказуемого предложения, которое иногда выступает в безличной форме.

T.S. Shahverdyan

The transposition of structure of simple sentence in ancient Armenian Language

In the present article the problems of transposition of structure of simple sentence in ancient classical Armenian language are discussed. As it is known the transposition comprises the change of meaning of elements of different layers of language hence they are used in uncommon grammatical meaning. Among those transpositions the rhetorical question is the most widespread, which is interrogative in its form, but is an affirmative syntactic structure by its meaning. In the present research in the sample of transpositions in simple sentences is shown that it is typical to classical ancient Armenian language to bear the overchanges in grammatical structures. In ancient Armenian language formally one-unit sentence often in contentual aspect is a two-unit sentence, in the result of unusual stylistic usage of the predicate of the sentence in the verbal form.